

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի  
գիտական խորհրդի 27.03.19թ. կայացած թիվ 10.18-19 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 36 անդամներից 30-ը:

Նիստը վարեց ֆիզիկայի ֆակուլտետի դեկան, պրոֆ. Ռ. Հակոբյանը:

### **Հաստատվեց հետևյալ օրակարգը՝**

1. Ջորակոչից տարկետում տալու կարգի քննարկում:
2. Մագիստրոսական կրթական ծրագրերում ոչ մասնագիտական առարկաների ցանկի քննարկում:
3. Դոկտորական ատենախոսության թեմայի հաստատում:
4. ԵՊՀ-ում իրականացվելիք Բարեփոխումների քննարկում:
5. Ընթացիկ հարցեր:

### **Լսեցին՝ զորակոչից տարկետում տալու կարգի քննարկման հարցը:**

**Ելույթ ունեցավ** Ռ. Ավագյանը: Նա ասաց, որ ֆիզիկայի ֆակուլտետը միշտ կողմ է եղել կրթության շարունակականությանը: Նա առաջարկեց նամակով դիմել ԵՊՀ դեկավարությանը, որպեսզի ԵՊՀ-ն կազմակերպի քննարկումներ, արտահայտի իր դիրքորոշումը այս հարցի շուրջ և դիմի ՀՀ ազգային ժողովին և կառավարությանը զորակոչից տարկետում տալու կարգը վերանայելու համար: Ուսանողներից **Ա. Գևորգյանը ասաց**, որ միզուցե կրթության անընդհանսությունը ապահովելու և միևնույն ժամանակ ուսանողներին ռազմական գործին ծանոթացնելու նպատակով ճիշտ կլինի համալսարանում մտցվեն համապատասխան առարկաներ:

**Որոշեցին՝** ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝ Ա. Գևորգյան, Մ. Սարգսյան, Ռ. Հակոբյան, որը կդիտարկի բոլոր առաջարկները, ի մի կբերի դրանք և ֆակուլտետի անունից առաջարկներով միասնական նամակ կպատրաստի:

### **Լսեցին՝**

**Մագիստրոսական կրթական ծրագրերում ոչ մասնագիտական առարկաների ցանկի քննարկման հարցը:**

**Ելույթ ունեցավ** ֆակուլտետի դեկան **Ռ. Հակոբյան**, ով ներկայացրեց հարցը: Խոսվեց այն մասին, որ մագիստրոսական ուսումնական ծրագրերը խիստ ծանրաբեռնված են ոչ մասնագիտական առարկաներով, ինչը թույլ չի տալիս ավելացնել մասնագիտական առարկաների թիվը: **Ելույթ ունեցավ Ե. Դայանը**, ով իր խոսքում նշեց, որ մագիստրատուրայում դասավանդվող առարկաների ցանկը պետք է որոշեն մասնագետները, որոնք այդ ծրագիրը կազմում են, ինչ թույլ կտա ապահովել պատրաստվող մասնագետների որակը: Ուսանողներից **ելույթ ունեցավ Մ. Սարգսյանը**, ով ասաց, որ նպատակահարմար կլիներ, որ այդ հարցերում ֆակուլտետներին տրվեր ինքնավարություն: **Լ. Ալոյանը** ասաց, որ որոշ ոչ մասնագիտական առարկաներ, մասնավորապես անգլերեն լեզուն շատ կարևոր են, այդ պատճառով գուցե ավելի լավ կլիներ, եթե ոչ մասնագիտական առարկաները կամընտրական լինեին ու դասավանդվեին ուսանողի ցանկությամբ: **Ելույթ ունեցավ Լ. Ասլանյանը**, ով ասաց որ մի քանի տարի առաջ ֆակուլտետը այդպիսի առաջարկով հանդես եկել է, բայց դրան ընթացք չի տրվել: Այդ պատճառով կարևոր է, որ բոլոր ֆակուլտետները աշխատեն համատեղ:

**Որոշեցին՝** ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝ Ե. Դայան, Լ. Ալոյան, Ա. Վարդանյան, Մ. Սարգսյան, այս հարցի վերաբերյալ նախկինում պատրաստված փաստաթուղթը խմբագրելու և համալրելու նպատակով:

**Լսեցին՝** դոկտորական ատենախոսությունների թեմաների հաստատման հարցը:

2 դոկտորական ատենախոսությունների թեմաները ներկայացնելու համար **ելույթ ունեցավ Ռ. Հակոբյանը**:

Ներկայացվեց Արարատ Եղիկայնի դոկտորական ատենախոսության վերաբերյալ ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի դրական կարծիքը: Առաջարկվեց հաստատել "Ատոմների և մոլեկուլների փոխակերպումները միջաստղային ամպերում և նախակենսամոլեկուլների առաջացումը" թեման որպես Ա. Եղիկայնի դոկտորական ատենախոսության թեմա: **Որոշեցին՝** հաստատել ատենախոսության թեման՝ տեսական ֆիզիկա Ա.04.02 դասիչով:

Ներկայացվեց ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետի պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.թ., Արամ Մանասեյանի ատենախոսությունը և առաջարկվեց հաստատել

"Կիսահաղորդչային նանոկառուցվածքների օպտիկական և մագնիսական բնութագրերի վրա սպինային փոխազդեցությունների և որոշ արտաքին գործոնների ազդեցության տեսական ուսումնասիրություն" թեման: **Որոշեցին՝** հաստատել Ա. Մանասելյանի դոկտորական ատենախոսության թեման:

**Լսեցին՝ ԵՊՀ-ում իրականացվելիք բարեփոխումների հարցը:**

Քննարկվեց ԵՊՀ-ում բարեփոխումներ իրականացնելու ուղղությամբ առաջարկությունները: Հնչեցին տարբեր առաջարկություններ այդ ուղղությամբ:

**Որոշեցին՝** բոլոր առաջարկությունները ձևակերպել և ուղարկել Ա. Սահարյանին, ով ընդգրկված է ԵՊՀ-ի բարեփոխումների հանձնաժողովում, ինչպես նաև հրավիրել ֆիզիկայի ֆակուլտետի գիտխորհրդի հատուկ նիստ՝ նվիրված այս հարցերի քննարկմանը:

**Ընթացիկ հարցեր**

**Լսեցին՝** տեսական ֆիզիկայի ամբիոնի առաջին տարվա հեռակա ուսումնառության ասպիրանտ Հռիփսիմե Տերյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

**Որոշեցին՝** հաստատել Հռիփսիմե Տերյանի ատենախոսության թեման՝ «Սկայարթենգորական գրավիտացիայի որոշ լուծումներ և դրանց կիրառությունները կոսմոլոգիայում ու աստղաֆիզիկայում» (մասնագիտացում՝ Ա.04.02 – տեսական ֆիզիկա): Գիտական ղեկավար նշանակել ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գոհար Հարությունյանին:

**Լսեցին՝** դասագրքերի և ուսումնամեթոդական ձեռնարկների երաշխավորման հարցը:

**Ելույթ ունեցավ՝** ֆակուլտետի ղեկան Ռ. Հակոբյանը, ով ներկայացրեց Ալբերտ Կիրակոսյանի հեղինակած «Ատոմի ֆիզիկա» դասագիրքը: Նա նշեց, որ ստացվել է ֆիզիկայի ֆակուլտետի մեթոդական խորհրդի եզրակացությունը վերոհիշյալ ձեռնարկը բակալավրական ուսումնական ծրագրերում ընդգրկելու նպատակահարմարության մասին: Նշվեց, որ ձեռնարկի վերաբերյալ ֆակուլտետի մեթոդական խորհուրդը ստացել է պրոֆեսորներ Ա. Սահարյանի և Դ. Բաղայանի և դրական եզրակացությունները:

**Որոշեցին՝** Երաշխավորել վերը նշված դասագրքի ընդգրկումը ուսումնական գործընթացում՝ որպես դասավանդվող համանուն առարկայի համար հիմնական ձեռնարկ մայրենի լեզվով և դրա տպագրությունը ԵՊՀ տպարանում:

Ռ. Հակոբյանը ներկայացրեց Վ. Համբարձումյանի անվան ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի ներկայացրած Ա. Մուրադյանի, Ա. Գևորգյանի, Հ. Երիցյանի, Հ. Բաղալյանի, Լ. Գրիգորյանի, Մ. Հարությունյանի, Ժ. Նինոյանի, Լ. Հովհաննիսյանի «Օպտիկա և ատոմային ֆիզիկա. Լաբորատոր աշխատանքների ուղեցույց» աշխատանքը: Նա նշեց, որ ստացվել է ֆիզիկայի ֆակուլտետի մեթոդական խորհրդի եզրակացությունը վերոհիշյալ ձեռնարկը որպես ուսումնական լաբորատոր աշխատանքների ձեռնարկ բնագիտական ֆակուլտետների համանուն առարկայի լաբորատոր փորձերի ուսումնական ծրագրերում ընդգրկելու նպատակահարմարության մասին: Նշվեց, որ ձեռնարկի վերաբերյալ ֆակուլտետի մեթոդական խորհուրդը ստացել է պրոֆեսոր Ռ. Ալավերդյանի և ֆ.մ.գ.դ Է Կոկանյանի դրական եզրակացություններ:

**Որոշեցին՝** Երաշխավորել վերը նշված ձեռնարկի ընդգրկումը ուսումնական գործընթացում՝ հիմնականում որպես լաբորատոր ձեռնարկբնագիտական ֆակուլտետների համանուն առարկայի լաբորատոր փորձերի անցկացման համար և դրա տպագրությունը ԵՊՀ տպարանում:

Ներկայացվեց Վ. Համբարձումյանի անվան ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի ներկայացրած Ա. Մուրադյանի, Պ. Պետրոսյանի, Ս. Մխիթարյանի, Լ. Գրիգորյանի, Ժ. Խաչատրյանի, Է. Քարաջյանի «Էլեկտրականություն և մագնիսականություն. Լաբորատոր աշխատանքների ուղեցույց» աշխատանքը: Նա նշեց, որ ստացվել է ֆիզիկայի ֆակուլտետի մեթոդական խորհրդի եզրակացությունը վերոհիշյալ ձեռնարկը որպես ուսումնական լաբորատոր աշխատանքների ձեռնարկ ֆիզիկայի և բնագիտական մյուս ֆակուլտետների համանուն առարկայի լաբորատոր փորձերի ուսումնական ծրագրերում ընդգրկելու նպատակահարմարության մասին: Նշվեց, որ ձեռնարկի վերաբերյալ ֆակուլտետի մեթոդական խորհուրդը ստացել է պրոֆեսորներ Խ. Ներկարարյանի և Ա. Խաչատրյանի դրական եզրակացություններ:

**Որոշեցին՝** Երաշխավորել վերը նշված ձեռնարկի ընդգրկումը ուսումնական գործընթացում՝ հիմնականում որպես լաբորատոր ձեռնարկը ֆիզիկայի և բնագիտական մյուս ֆակուլտետների համանուն առարկայի լաբորատոր փորձերի անցկացման համար և դրա տպագրությունը ԵՊՀ տպարանում:

Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան՝



Ռ.Ս. Հակոբյան

Խորհրդի քարտուղար՝



Շ.Ա. Տոնոյան